Հաշվետվություն

2022 թվականի ապրիլի 6-ից 8-ը Վրաստան (Թբիլիսի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Արամ Գուգարաց
   Գևորգ Մանուկյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ
   կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Վրաստան, Թբիլիսի, 2022 թվականի ապրիլի 6-ից 8-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Վրաստանի արդարադատության նախարարության Հանրային ռեգիստրի ազգային գործակալություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   - Վրաստանի Հանրային ռեգիստրի ազգային գործակալության փորձի ուսումնասիրում, փոխանակում,
   - Վրաստանի Հանրային ռեգիստրի ազգային գործակալությունում ներդրված նորարարական ծրագրերին և բարեփոխումներին ծանոթացում.

Քննարկված թեմաները.

Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.

- Վրաստանի հանրային ռեգիստրի գործակալության կարգավիճակը, գրանցման համակարգը և ծառայություններ, ընթացիկ բարեփոխումներ,
- Երկրատարածական զարգացումը Վրաստանի հանրային ռեգիստրի գործակալությունում,
- Գեոդեզիա և քարտեզագրություն,
- Տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի զարգացումը (NSDI) և Ինտեգրված երկրատարածական տեղեկատվական շրջանակը,
- Վրաստանի ինտերակտիվ քարտեզը,
- Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը գրանցման ծառայություններում,
- Հասցեավորման համակարգը,
- SS ենթակառուցվածքը և ԱՏՀ-ն Վրաստանի հանրային ռեգիստրի ազգային գործակալությունում,
- Գեոդեզիայի և քարտեզագրության զարգացումը Վրաստանում և Նորվեգիայի

աջակցությունը:

6. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.

Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում էին Կոմիտեի ղեկավարի տեղակալ Արամ Գուգարացը և գեոդեզիայի և հողաշինարարության վարչության պետ Գևորգ Մանուկյանը: Թբիլիսիում պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ Վրաստանի Հանրային ռեգիստրի ազգային գործակալության ղեկավարության և ոլորտի տարբեր մասնագետների հետ: Քննարկվեցին տարածական տվյալների ազգային ենթակառուցվածքի զարգացման, գույքի գրանցման, գեոդեզիայի, քարտեզագրության և թվայնացման, անշարժ գույքի էլեկտրոնային գրանցման համակարգերի զարգացմանը, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Հանդիպման ընթացքում վրացի գործընկերները ներկայացրեցին նաև միջազգային համագործակցության շնորհիվ ներդրված ազգային գեոպորտալի կառուցվածքը և տարածական տվյալների ու մետատվյալների հավաքագրման, պահպանման, տրամադրման և փոխանակման առանձնահատկությունները, որը դեռևս գործարկված չէ, սակայն նախատեսվում է մոտ ապագայում հասանելիություն ապահովել պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի համար: Հանդիպման ընթացքում քննարկվեց Վրաստանի Հանրային ռեգիստրի ազգային գործակալության ղեկավարության՝ Հայաստան այցի մանրամասները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Վրաստանի Հանրային ռեգիստրի ազգային գործակալության ղեկավարության հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց փորձի փոխանակման և անշարժ գույքի էլեկտրոնային գրանցման համակարգերի զարգացման շուրջ ավելի սերտ համագործակցության վերաբերյալ: Որոշվեց կազմակերպել վրացական պատվիրակության փոխադարձ այցը, ինչպես նաև երկու կողմերի մասնագետների փորձի փոխանակումը տեսակոնֆերանսների միջոցով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.

Կադաստրի Կոմիտեն կապահովի Վրաստանի Հանրային ռեգիստրի ազգային գործակալության ղեկավարության հետ հանդիպման հնչած առաջարկությունների և ձեռք բերված պայմանավորվածությունների պատշաճ կատարումը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արամ Գուգարաց 12.04.2022թ.

Գևորգ Մանուկյան